կացողութիւնը, որչափ հեռու էին աւետարանի բուն ոգին ըմբռնելուց, մինչ առանց երկար բարակ մտածելու՝ «ահա այստեղ երկու սուր կայ», պատասխանեցին. և որչափ կսկիծ, որչափ դառն հեգնութիւն կար փրկչի խօսքի մէջ, երբ վրայ բերաւ՝ «Բաւական են»։ Բաւական, այո՝ աւելի քան բաւական էին Նորա անդուլ ջանքերը, Նորա հրաշարար քարոզներն ու աքանչելի գործերը մարդոց խաւար միտքը լուսաւորելու և կորպացած սրտերը մշակելու համար. նոցա հոգևոր կուրութիւնն այն ժամանակ միայն փարատուել և հասկանալ կարող էին, թէ ինչ է այն սուրը, որով պէտք է կռուեն աշխարհի դէմ երբ Ջօրագլուխը նահատակների՝ խաչի նշանով զինուած, մահուան թագաւորութիւնը կործանեց և մեծ յաղթանակով նոր Առաքոլի մօտ բարձրացաւ։ Ոսկ գրերի պատմութիւնը մեզ սովորեցնում է, թէ որպիսի մեծ զօրութիւն է ունեցել այդ զէնքը նաև Նորա հետևողների ձեռքում։ Սրով հանդէս գային նոքա, թէ արի նշանակ լինէին՝ ասում էր։ Նոցա այժ և յաղթութիւն տուողը ոչ թէ նիւթական սուրն էր, այլ հոգւոյ սրութիւնը՝ այն անխորտակելի հաւատը, թէ մի Աստուածակալող ծէր և բազմագութ Հայր կայ երկնքում, որ հրամայում է արդարութեան ջատագով կանգնել, հակառակ աշխարհի ծանր սպառնալիքներին, հակառակ չարի փորձութիւններին։—Այսօր մեզ ոչ մի կողմից սուր չէ սպառնում և մենք կարիք չունինք զէնք առնելու ի պաշտպանութիւն մեր գաւանած ճշմարտութեան. բայց հոգւով զինուած լինելու և հաւատոյ մարտը վարելու կարիքը նոյնքան մեծ է մեր օրերում, որքան եղել է երբ և իցէ։ Մեր մարտը մեղք ուսմունքների ու կարծեցեալ ճշմարտութիւնների դէմ է, որոնցով կարծես թէ անմահութեան ճեմոն վրայից ցած իջեցնել են կամենում միակ ճշմարտին և տեղը մի անկերպարան կուռք նստեցնել։ Մեր սեփական սուր կրքերի և նիւթական ոչնչութեանց հետ կռուող չար ցանկութիւնների դէմ է մեր մարտը, որոնք արդարութեան ու սրբութեան շաւղից մեզ մոլորեցնել և ապականութեան խորխորատը ձգել են փորձում։ Եւ անհրաժեշտ է, որ մենք սպառազինուինք ճշմարտութեան բոլոր զէնքերով ու արի զինուորներ լինինք այս հոգևոր մարտի մէջ։ Զգաստանանք գիտութեան զօրութիւնից, որի անունով ունայն տեղը մեզ սպառնում են. իսկական գիտութիւնը մեր հակառակորդը չէ, այլ մեր բարեկամը, որ մեր ճանապարհները աւելի կը լուսաւորէ ու կհարթէ՝ աւելի հաստ կդարձնէ մեր զէնքերը։ Եւ անկարելի է, որ մենք ընկճուինք ու պարտութիւն կրենք, եթէ առկուռնութիւն ունենանք մինչև ի մահ կռուելու յանուն մեզ առաջնորդող սկզբունքների, զի —«այս է յաղթութիւնն, որ յաղթէ աշխարհի՝ հաւատքն մեր»։

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ Ս. ԳԻՐՔԸ.

Ինչքա՜ն բան է գրուել այն օրից ի վեր, երբ մարդիկ սովորեցին զանազան նշաններ գծելով արտայայտել իրենց միտքը. գրուել է քարի ու պղնձի վերայ՝ մագաղաթի և զանազան տեսակ թղթերի վերայ—ժամանակի հոսանքը սրբել, տարել է բոլորը, և մի խղճալի մնացորդ միայն թողել. իսկ այդ մնացորդից որչա՜փն արդեօք մատչելի է և հոգևոր սնունդ է մատակարարում սովորական մահկանացուներին. քանի՜ մարդ արդեօք մտանեցած բառերի խորքերն են մտնում կամ մուտք արձանագրութիւնների առաջ ամիսներով և տարիներով աքնում՝ հին հին ժամանակների մեղ թողած աւանդը վերակենդանացնելու և կեանքի խրատը նոցանից հանելու համար։ Եթէ մի ժամանակ գարերով էր աճում գրականութիւնը, այժմ օրերով է աճում. անթիւ անհամար մեծ գրչակները չհաշուած՝ տարեցտարի գալիս մեր աչքի առջևից անցնում են նորանոր մատենագիրներ, նորանոր հոչակ ստացած հեղինակութիւններ՝ անցնում են, և քսան մեծ մասին կրկին չեն յիշում. նա որ երեկ փայլում էր հրապարակի վերայ, այսօր լոկ անունով յայտնի է, իսկ նորա գրուածքը կարդալու մենք այլ ևս միջոց չունինք, կամ եթէ կարդում ենք՝ յօրանջում ենք ձանձրութիւնից։—Մի գիրք կայ միայն, որ ահա դարեր շարունակ կարդում են մարդիկ, և երբէք չեն ձանձրանում. որ կարդում են աւելիը՝ թէ բարդ ակնոցներն աչքերին, խոր մտքերի մէջ խորասուզուած գիտնականը, թէ կոշտ ձեռասով և ձեռներով՝ հաղիւ տառերը միմեանց հետ հեգել կարողացող գիւղացին. թէ քաղաքակիրթ Եւրոպայի բնակիչները և թէ Աֆրիկայի անապատում

թափառող նեգրոնները կամ Աստուցեալ ովկիանոսի ծոցում կուչ եկած էսկիմոները. հրիտասարդ և ծեր, իշխան և սարուկ՝ ամէնքը կարդում են և ամէնքի հետ խօսում է նա իւրեանց լեզուով, իւրեանց ըմբռնողութեան մատչելի եղանակով՝ լեցնում է ամէնքի հոգւոյ անձկութիւնը, գառնում ամէնքի համար անփոխարինելի աղբիւր հոգևոր շինութեան և մխիթարութեան. Ինչպէ՞ս է լինում այդ և որտեղից է առանում հրաշալի գիրքն իւր խորհրդաւոր զօրութիւնը.

Մեր գարու հրապարակի վերայ վաճառուղ փիլիսոփայութիւններից մէկն էլ այն է, թէ ինչպես մեզ քրիստոնեաներիս համար մեր կրօնն է միակ ճշմարիտը և մեր ս. Գիրքը միակ հրաշալին ու խորհրդաւորը, այնպէս և ուրիշների համար իրենցը. ուստի արդարութեամբ գառելով իրաւունք չունինք մեր համոզումն ուրիշ և նոցանը սխալ համարելու. Բայց այդ կեղծ արդարամտութիւնը չառաջ է գալիս միայն մեր կրօնական անտարբերութիւնից և մեր՝ չուսումնասիրած խնդիրների նկատմամբ, ընդհանուր խօսքերով իմաստուն մտքեր չյատնելու սովորութիւնից: Իսկական հաւատացողը ճշմարիտ է համարում իւր կրօնը ոչ թէ այն պատճառաւ, որ իրենն է, այլ որ նորա մէջ է գտել յաւիտենական կեանքի գաղտնիքը և այդպիսով համոզուել նորա ճշմարիտ լինելուն. ապա թէ ոչ կը թողնէր, և մի ուրիշ ճշմարտագոյնը կորոնէր. Ինչ վերաբերում է յատկապէս քրիստոնէական ս. Գրքին՝ նորա անպայման մեծ արժէքը միայն հաւատացող քրիստոնէին չէ յայտնի. բոլորիքեան որ միանգամ լրջօքէն զբաղուել են այդ չնաշխարհիկ գրքով և ջոյլ են տուել որ նա իրենց սրտի և հոգւոյ հետ խօսէ՝ ստիպուած են եղել խոստովանելու, թէ մի արտաքոյ կարգի՝ հասարակ մարդու մտածողութեան և երևակայութեան սահմանից դուրս բան կայ նորա մէջ. Բիրաւի ուրիշ կրօնական կամ զուտ բանաստեղծական գրուածքներ ևս կան, որոնք ընդհանուր մարդկութեան սեփականութիւն կարող են համարուել և հարիւրաւոր հազարաւոր սերունդների ձեռքից են անցել, ոգի ներշնչել և բարոյական կեանքի ուղեցոյց եղել՝ առանց իրենց թարմութիւնն ու գեղեցկութիւնը կորցնելու. բայց նոցանից իւրաքանչիւրն ունի իւր երկրաւոր ծագման յատուկ թերութիւնները. Մահմեդի Ղուրանը Արաբիայի մոլեռանդ զաւակներին ոգևորում էր և սուրը ձեռին աշխարհը նուաճելու ուղարկում՝ յանուն մի Աստուծոյ և նորա մարգարէի, բայց մեզ համար նա՝ իւր բանաստեղծական արժանաւորութիւններով հանդերձ, կրօնական նեղ հայեացքների և մոլար բարոյական սկզբունքների մի ողբալի, կեղծուր շարայարութիւն է, որ առանց ներքին դժկամակութեան կարդալ չենք կարող և որ ցեղական ու կլիմայական որոշ սահմաններից, աշխարհայեցողութեան որոշ շրջանակից դուրս բոլորովին կորցնում է իւր աղդեցութիւնը. Նորին պէտք է ասել չինացիների, հնդիկների, պարսիկների սրբազան գրուածների մասին. Նոցա բոլորի մէջ կան խոր մտքեր և գեղեցիկ ասացուածներ, երջանկութեան ու ճշմարտութեան ձգտող հոգու ծանր հառաչներ և կախարդական պատկերացումներ, բայց ոչ մէկը մեր հոգևոր ծարաւը չի յագեցնում, մեր մտայլ ու ցաւերով լի կեանքից դեպի մի լոյս աշխարհ տանող ճանապարհ ցոյց չէ տալիս. Ձեն առնում այդ հարկաւ հին ու նոր ժամանակի ամենաերևելի բանաստեղծական գործերն ևս. մէկը գրաւում է արտայայտութիւնների գեղեցկութեամբ, միսը բովանդակութեան վսեմութեամբ. մէկն այս ժամանակի, տասակի, կրթութեան համար հետաքրքրական է, միսը մի ուրիշ. Աստուածաշունչ ս. գիրքն է միայն, որի նկատմամբ բոլոր այլևայլութիւնները վերանում են և որ բոլորի անբաժան ընկերը դառնալ կարող է ամբողջ կեանքի ընթացքում.

Եւ զարմանալի չէ, որ նա այդպիսի տիեզերական բնաւորութիւն ունի. Նորա միջոցաւ մեզ հետ խօսողը հասարակ մարդիկ չեն՝ իրենց առհասարակ հայեացքներով և եսական զգացումներով, այլ ոմանք որ Տէրը, որ միաժամանակ բանական ոգի է ներշնչել բոլոր մարդոց և բոլորին հրաւիրում է ի նոյն կեանս կոչման. Իսկ Աստուծոյ խօսքերը շատ տարբեր են մարդու խօսածից. Երեմիա մարգարէն գեղեցիկ օրինակներ է բերում այդ տարբերութիւնը բացատրելու համար. «Զի՞նչ է յարդ առ ցորենս, ասէ Տէր, ոչ ապաքէն բանք իմ իբրև գՀուր են, ասէ Տէր, և իբրև զմուրճ որ հատանէ զվէմս». Այո՛, անթիւ հայհոյաւոր հոգիներ զգացել են և շարունակում են զգալ այն կիզիչ և մաքրիչ ազդեցութիւնը, որ ս. Գրքի մէջ արձանագրուած Աստուծոյ խօսքերն են թողնում՝ իբրև մի ծանր մուրճ մեր ապառաժ կրծքերի վերայ բնկնող այդ խօսքերը, որ խորտակում փշրում են մեր անօրէն ցանկութիւնները և կակուղ գետին դարձնում մեր սիրտը Երկնքից ընկած սերմերի համար: Հարկաւ մեկնողն զօրութեամբ չէ բորբոքուում աստուածային հուրը ս. Գրքի իւրաքանչիւր խօսքի մէջ, և Հին ու Նոր Կտակարանների բոլոր գրուածները հաւասարապէս ազդեցութիւն չունին մեզ վերայ, Մարդոց բերանով է խօսել Աստուած մարդոց հետ, և երբ Նորա Հոգին թևածրում էր Իւր պատգամները մի մարգարէի կամ առաքեալի կոնիցը բռնած չէր գրում, ինչպէս պնդել են Աստուածաշունչի տառական անսխալականութեան պաշտպանները, այլ կրակ ձգելով Նորա Հոգու մէջ՝ Նորա տակը գրչին հրեղէն ազդեցութիւն. Նորա տակը լեզուի արտայայտութիւններին գերբնական իմաստ ու բովանդակութիւն էր շնորհում. Իսկ գրում էր

նա ինքը՝ իր ժամանակի աշխարհայեցողութեան, իր բնական ընդունակութիւնների, առացած կրթութեան և շրջապատող պայմանների համապատասխան ոճով։ Եւ բնականաբար ի վերուստ առացածի հետ խառնուած էր նաև իր մարդկային մտածութիւնները, ուստի ինչպէս որ ս. Գիրքը իր ամրողջութեամբ ուրիշ գրքերի հետ համեմատելով՝ նորա մէջ գտնում ենք աստուածային տուրը, որ չկայ միւսների մէջ, այդպէս և նորա առանձին մասերը միմեանց հետ համեմատելիս կարող ենք իւրաքանչիւր քայլափոխում նոյն հոգի՝ ներգործութիւնից զգրակացնել, թէ ինչը Աստուծոյ ասած է, և ինչը մարդոց՝ ինչը յաւիտենական բնաւորութիւն ունի և ինչը մի որոշ ժամանակի դրոշմն է կրում։

Ս. Գրքի զանազան մասերը յառաջ են եկել դարերով միմեանցից հեռու ժամանակներում, և իրենց արտաքին կազմութեամբ ու բովանդակութեամբ շատ տարբերուում են միմեանցից։ Մեծ է և աչքի ընկնող մանաւանդ Հին ու Նոր Կտակարանների մէջ եղած տարբերութիւնը։ Հին Կտակարանը մեր առաջ պատկերացնում է Իսրայէլի ժողովուրդի պատմական անցեալը իրեն յատուկ պարագաներով։ Մի փոքրիկ մասնաւորապէս է դա, ինչպէս ասում էր Նորերս աստուածարանութեան անուանի ուսուցչապետներից մէկը, որի մէջ ամփոփուած են այդ ժողովուրդի գրեթէ բոլոր գրական արդիւնքները՝ և պատմական նկարագիրները, և՝ աղօթքի երգեր, և՝ մարգարէից քարոզները, և՝ քահանայից օրէնքները, և՝ բարեպաշտ սրտերի մխիթարներ, և՝ իմաստութեան խորհրդածութիւններ. — Տասնեակ դարերի ընթացքում են յառաջ եկել դրա՝ հետզհետէ, ըստ մեծի մասին անկախ միմեանցից, և շատ յետոյ արդէն միատեղ ժողովուել, իրար կցուել և մի ամրողջութիւն դարձել, որ իր բաղմերանութեան շնայած մի է այնուամենայնիւ, որովհետև Իսրայէլի պատմական կեանքին ուղղութիւն տուողը և այս սահմանում բոլոր կարևոր երևոյթներն յառաջ բերողը Իսրայէլի Մի Աստուածն է՝ ինչ որ այստեղ գրուել է, Նորա Հոգու ազդեցութեամբ է գրուել, Նորա շնչով։ Իսկ Իսրայէլի Աստուածը նաև մեր Աստուածն է՝ միակ ճշմարիտ Աստուածը. ուրեմն Նորա Հոգւոյ թելադրութիւնները նոյնպիսի ճշմարիտ յայտնութիւններ են մեզ համար, ինչպէս էին իսրայէլացւոց համար, և այդ՝ մի մասնաւոր ժողովուրդի եղած մասնաւոր յայտնութիւններն են մեզ պարգում, թէ ինչ միջոցներով նախապատրաստեց Աստուած կատարեալ յայտնութիւնը ընդհանուր մարդկութեան համար։ Մեծ անհեթեթութիւն կլիներ կարծել, թէ նոր և կատարեալ յայտնութեան գալուց յետոյ հինը իր նշանակութիւնը կորցրել է և նորը բաւական է մեր կրօնական բոլոր պահանջներին գոհացում տալու։ Եկեղեցւոյ պատմութիւնը հաստատում է, որ ամէն անգամ, երբ մի քրիստոնէական համայնք Հին Կտակարանն իրրև աւելորդ բեռն մի կողմ է դրել՝ կորցրել է իսկոյն ոտի տակից պատմական հողը, և կամայական բացատրութիւններ տալով այն աւետարանին, որի հարցերին հանդէս եկաւ իրրև Իսրայէլի Աստուծոյ ուղարկած Մեսիան՝ աղանդաւոր կերպարանք է ստացել։ Ընդհակառակն իրաւքանչիւր ճշմարիտ քրիստոնեայ, որ ուղիղ հայեցողութեամբ և պատշաճաւոր երկիւղածութեամբ ս. Գիրքը իր ձեռքն է առնում՝ ոչ միայն մարգարէից գրուածների և սաղմոսների, այլ նաև Հին Կտակարանի միւս մասերի մէջ Կենդանի Աստուծոյ խօսքը՝ և հոգևոր շինութիւն ու մխիթարութիւն գտնէ։

Անհրաժեշտ անհրաժեշտ է, որ Նոր Կտակարանն աւելի սերտ ու անմիջական կապ ունի մեր քրիստոնէական կեանքի հետ։ Այսօր արդէն թէ ձևի և թէ բովանդակութեան կողմից այնպիսի մեծ տարբերութիւններ չկան զանազան գրուածների մէջ, ինչպէս Հին Կտակարանում։ Բոլորիքեան նոքա նոյն դարու, նոյն կրօնական շարժման, նոյն պատմական կեանքի և աշխարհայեցողութեան ծնունդ են։ Սակայն մեր կրօնին չվերաբերուող տարբեր գրեթէ չկան նոցա մէջ, և մենք կարող ենք ամրողջը աւելի հասկի և կրթութեան տէր անձանց ձեռք տալ, առանց կասկածելու, թէ մի գուցէ այս կամ այն հատուածը իր ժամանակի ոգուն համապատասխան չհասկացուելով շփոթութիւն և նոյն իսկ գայթակղութիւն պատճառէ, ինչպէս իրօք այդպիսի կասկած կարելի էր Հին Կտակարանի մի քանի մասերի համար ունենալ։ Բացի դորանից, Նոր Կտակարանը յանախէն լեզուաւ գրուած և շատ վաղ ի մի ամփոփուած ու իրրև ս. Գիրքը ընդունուած լինելով՝ համեմատաբար անվթար պահուել է և մեր ձեռքը հասել գրեթէ նոյն վիճակի մէջ, ինչպէս եղեր էր հեղինակների գրչի տակից։ Մինչդեռ Հին Կտակարանի գրուածները այնպիսի պայմանների մէջ են յառաջ եկել և այնպիսի փորձութիւնների բովից անցել, որ զարմանալի չէ ամենևին, եթէ մենք այսօր շատ տեղերում մեծապէս դժուարանում ենք նախնական իմաստը վերականգնել։ Սերբայեցերէնը, որով նոքա գրուել են (բացի մի քանի հատուածներից և երկրորդականն գրքերից), ինչպէս յայտնի է, միւս սեմական լեզուների նման՝ ձայնաւոր չունի։ Բաբելոնի գերութիւնից յետոյ նա կամաց կամաց դադարից խօսակցական լեզու լինելուց, և Քրիստոսի ժամանակից հրեաները արդէն արամերէն բարբառով էին խօսում, իսկ բուն սերբայեցերէնը սովորում էին դպրոցում, ինչպէս մենք մեր գրաբարն ենք սովորում։ Բնական է, որ այդ դէպքում միայն ամենագիտուն ադրիները կարող էին որոշել, թէ բաղաձայն տառերով գրուած

ս. Գրքի իւրաքանչիւր բառի վերայ ինչ ձայնաւորներ պէտք է ունենայ, որպէս զի նոցա նախնական իմաստն ստացուի։ Կարդալն ուրեմն այսօրէս մի շատ ծանր արուեստ էր, որ սկզբում բերանացի աւանդութեամբ սերունդէ սերունդ էր հաղորդուում, և միայն Ք. յ. Հրեայ գիտնականներն սկսեցին ձայնաւոր տառերի տեղ կէտեր գործածել, և այսպէս, մի քանի դար շարունակ ամենամանրակրկիտ աշխատանք գործ դնելով՝ մի հաստատուն բնագիր կազմեցին Հին Կտակարանի համար, որի իւրաքանչիւր տառն ու կէտը որոշուած են և որից արտագրուել են այնուհետև այժմեան բոլոր երբայեցերէն օրինակները։ Սակայն այդ՝ իր կազմողների անունով «մազորէթ»-ների կոչուած, բնագիրը արդի լեզուագիտութեան բոլոր պահանջներին բաւականութիւն չի տալիս, և մեր ժամանակի գիտնականները, որոնք հրեայ ոարբիներից աւելի միջոցներ ունին ստոյգն ու սխալը որոշելու՝ շատ բան տարբեր կերպով են կարդում, քան նոցա նշաններին նայած կարդալ պէտք էր։ Ընդհանուր, ներկայ բնագիրը զգալի տարբերութիւններ ունի նորա վերայ եղած ամենահին թարգմանութիւններից, որպիսիք են՝ յունարէն եօթանասնից թարգմանութիւնը, ասորերէն Պէշիթան, լատիներէն Վուլգատան։ Սոքա ցոյց են տալիս, որ թարգմանիչները ոչ միայն շատ բան այլ կերպ էին կարդում և հասկանում, այլ նաև նոցա ձեռքի տակ եղած բազմաթիւների ձեռագիրը բոլորովին նոյնը չէր ինչ որ այժմեանը։

Այս համառօտ դիտողութիւններից արդէն պարզ պէտք է երևայ՝ անկարելի և անտեղի լինելը այն ենթադրութեան, թէ մեր ս. Գիրքը նորա հաւատարիմ «աստուածաշունչ» է, որ նորա իւրաքանչիւր տառը ս. Հոգին է թելադրել և, գալիլի հոսանքի մէջ՝ ձեռագրից ձեռագիր, թարգմանութիւնից թարգմանութիւն և մամուլի տակից մինչև մեր ձեռքը հասնելն անպակաս պահելով՝ անսխալ ուղեցոյց տուել մեզ կրօնական–բարոյական կեանքի համար։ Հոգի է Աստուած, և մենք իրրև մի սուրբ անօրէնութիւն պէտք է ընդունենք նորա կողմից, որ նա չի կամեցել իւր Հոգւոյ ներգործութիւնը կաշկանդել անշարժ գրերով. «Չի գիրն սպանանէ, այլ Հոգին կեցուցանէ»։ ուստի և իրրև «Հոգւոյ պաշտօնեաներ», Հոգւով և ճշմարտութեամբ երկրպագողներ՝ պէտք է Հոգին միայն որոնենք ս. Գրքի մէջ և ոչ թէ մեր փրկութիւնը տառի հետ կապենք։ Սակ Հոգին մենք կարող ենք միշտ գտնել, հակառակ բոլոր տառական փոփոխութիւնների՝ գտնել ոչ միայն բնագրում, երկարամեայ գիտնական աշխատութեան շնորհիւ, այլ նաև ամեն մի լուրջ, բարեպաշտ հոգւով և անպղտոր հայեացքով կատարուած թարգմանութեան մէջ, որի լեզուն հասկանալի է մեզ և մտքիկ մեր սրտին։

Ահա այդպիսի մի թարգմանութիւն է մեր հայերէն ոսկեդարեան Աստուածաշունչը, որի Հին Կտակարանը թարգմանել է յունարէն «Եօթանասնից» թարգմանութիւնից, գուցե մասամբ ասորերէն ոմն աղբեցութիւն ևս կրելով իւր վերայ, իսկ Նորը յունարէնի բնագրի ամենաճիշդ փոխադրութիւնն է,— Հին Կտակարանը թարգմանելու կարիք զգացուեցաւ առաջին անգամ Եգիպտոսում Քրիստոսից 2—3 դար առաջ բազմաթիւ հրեաներ կային այդտեղ այս ժամանակ, որոնք մայրենի լեզուն մոռացել էին և, ինչպէս իրենց Պաղեստինի ազգակիցներն արամերէն՝ իրենք ևս յունարէն էին խօսում։ Մի հին աւանդութեան համաձայն թարգմանութիւնը կատարել է տուել Պտղոմէոս Փիլադելփիոս թագաւորը (286—246 թ. ն. ք.)։ Երուսաղէմից 72 գիտնական հրեաներ բերել տալով՝ իւրաքանչիւր ցեղից 6 հոգի, որոնք իրենց հետ ս. Գրքի մի շատ փառաւոր օրինակ ունէին և Փարոս կղզու վերայ մի մի խցի մէջ փակուած 72 օրուայ մէջ գլուխ բերին այդ մեծ գործը. ուստի և նոցա թարգմանութիւնը «Եօթանասնից» է կոչուում։ Քրիստոսի ժամանակ նա արդէն բնագրի հաւասար յարգ էր վայելում բոլոր հրեաների մէջ, և նոր Կտակարանում յաճախ բերուած վկայութիւնները մեծ մասամբ նորանից են առնուած։ Իրօք մի հրաշկայական գործ էր այդ և անպակաս նշանակութիւն է ունեցել, ինչպէս նախ քան քրիստոնէութեան տարածուելը յոյն—հռոմէական աշխարհում ճշմարիտ կրօնի ըմբռնումը նախապատրաստելով, այնպէս և քրիստոնէութեան քարոզիչներին պատրաստ կրօնական լեզու տալով, իրենց գաղափարներն արծարծելու համար։ Սակայն այնպէս հանդիսաւոր կերպով և այնպիսի կարճ միջոցում գլուխ եկած լինելէ կարող այդ գործը, ինչպէս աւանդութիւնն է ներկայացնում՝ զանազան մասերը պէտք է թարգմանուած լինին զանազան ժամանակներում, զանազան մարդոց ձեռքով, և գուցէ մի ամբողջ դար տևել է (Գ. դարի կիսից—Թ. դարի կէսը), մինչև վերջին գրքերը թարգմանուել են։ Ամենից առաջ կթարգմանուէին անշուշտ օրինաց գրքերը՝ Մովսէսի հնգամասեանը, որ անհրաժեշտ էր իւրաքանչիւր հրեի ձեռքը տալ իրրև ազգային կրօնի գաստիրքը. ապա յաջորդել են միւսները՝ նայած ժամանակի պահանջներին։ Ըստ այսմ և բոլոր մասերի թարգմանութիւնը հաւասար արժէք չունի՝ մի քանիսը, օրինակ Մովսէսի գրքերը, ուելի մեծ, միւսները, օրինակ փոքր մարգարէները՝ աւելի պակաս խնամքով են թարգմանուած, և դորանից է որ նաև հայերէն փոխադրութեան մէջ վերջիններս այնչափ դժուարհասկանալի տեղեր ունին։

Հայերէն թարգմանութիւնն իսկապէս շատ գեղեցիկ և հարազատ փոխադրութիւն է, թէ Հին Կտակարանի նկատմամբ՝ եթանասնից թարգմանութեան, և

թէ նոր Կտակարանի նկատմամբ՝ յունարէն բնագրի ուսման և իրեն ամենահին թարգմանութիւններից մէկը, ընտիր ձեռագիր օրինակների միջոց կատարուած՝ մեծ արժէք ունի գիտնական տեսակէտից. մանաւանդ երբ խօսքը Նոր Կտակարանի մասին է։ Իսկ թէ որչափ մեծ է նորա արժէքը, որչափ բազմակողմանի նորա նշանակութիւնը մեզ հայերիս համար՝ յայտնի պէտք է լինի իւրաքանչիւրին, որ իւր և կեղեցւոյ հաւատարիմ զաւակն է և ձանաօթ իւր ազգի անցեալին։ Մեր ս. Գիրքը ազգային եկեղեցական գրականութեան առաջին արգիւնքն է։ Նորա վերայ է գործ դրուել առաջին անգամ Հայոց գիրը և գրականական լեզուն, և նա դարձել է մայր բոլոր մեր գրուածների ու թարգմանութիւնների։ Դարերի ընթացքում նա է եղել մեր հայերի համար կրօնի, բարոյականութեան, լեզուի գաւազիրքը։ Ազգային ինքնագիտակցութեան ամենակենդանի ժամանակն էր, երբ նա թարգմանուեցաւ և պարոց մանելով ամենակարճ միջոցում կարողացաւ այն ոգին սնուցանել, որ ասպարէզ հանեց Աւարայրի նահատակներին. և այդ ազգային—կրօնական ոգին անթաւան ժնաց միշտ նորանից՝ նոյն հոգևոր սնունդը մատակարարելով նորանոր սերունդներին։—Հոռոմէական եկեղեցին կարևոր է համարել ս. Գրքի ընթերցանութիւնն արգելել իւր աշխարհական անդամներին, որովհետև այն դիտակցութիւնն ունի, թէ ճշմարտութիւնը ներկայացնում է նոցա շատ անգամ այնպիսի դիւնելով և գնում է նոցա վերայ այնպիսի պարտականութիւններ, որ ս. Գիրքը կարգացողը գժուարութեամբ կհաշտեցնէր իւր խղճի հետ։ Մեր եկեղեցին, որ պարծենում է իւր առաքելական ծագմամբ և իւր նախնադարեան կարգերով ոչինչ չունի ծածկելու ճշմարտութեան աւետարանի առաջ, ուստի և ոչ միայն չի արգելում, այլ ընդհակառակն ամէն միջոց գործ է դրել, որ ըստ կարելոյն շատ տոլորն իւր զաւակները ս. Գիրքը կարդալ և նորանից քաղել իրենց կեանքի առաջնորդող սկզբունքները։ Մեր նախնիք աւետարանի և նոյն իսկ ամբողջ ս. Գրքի անթիւ օրինակներն են արտագրել ու ցրուել ժողովրդի մէջ, իսկ երբ տպագրութեան արուեստը տարածուել է և սկսել է յայտնի լինել նաև Ասիայի խուլ անկիւններում՝ Ս. Էջմիածնի Հայրապետական աթոռը պարտք է համարել իսկոյն Աստուածաշունչի տպագրութեան մասին հոգալ և ոչ մի չարմարութիւն չունենալով իւր անմիջական հսկողութեան ներքոյ կատարելու այդ գործը՝ մեծ գժուարութիւնների է յանձն առել իւր միաբաններից մէկին, Նահան վարդապետին, ձեռքով գլուխ բերել այն՝ հնգատոր Ամստերդամում (1666 թ.)։ Այնուհետև մի քանի ուրիշ տպագրութիւններ ևս եղել են՝ Մխիթարեան միաբանութեան և Աստուածաշնչի ընկերութեան հոգածութեամբ, բայց դէժբաղդաբար Մայր Աթոռը մինչև այժմ պատեհ ժամ չէ գտել մի հարատած տպագրութիւն լոյս ընծայելու։

Արդ, Նարին Ս. Օծութիւն մեր Վեհափառ Հայրապետը քաջ գիտենալով, թէ որչափ ցանկալի է բարեպաշտ հայ ժողովուրդին իւր հոգևոր կեանքի կենարարից ս. Գիրքը ընդունել՝ բարեհաճել է անօրինել, որ ներկայ թուականի աշնանը սկսուի ամբողջ Աստուածաշունչի տպագրութիւնը Մայր Աթոռի տպարանում։ Նախապատրաստական ծախքերը թեթևացնելու համար արդէն բաժանորդագրութիւն է սկսուած, որին չենք կասկածում, թէ պէտք է շատպէն շատ շատերը մասնակցելու՝ նպաստած լինելով այդպէս մի ամենակարևոր և շահեկան գործի յաջողութեան և յոյս ունենալով, թէ շատ ժամանակ չի անցնիլ, և իրենց սեղանի վերայ կունենան մեր երանելի նախնեաց Ս. Գիրքը՝ ամենահին և ընտիր օրինակների բաղդատութեամբ լոյս տեսած և Ամենայն Հայոց Հայրապետութեան կնիքով իբրև հաւատարիմ թարգման Աստուածային յայտնութեան վաւերացրած։ Աւելորդ է ասել, որ Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ տեսակէտից ոչ ոք առարկութիւն չէր ունենայ և նորա Երջանկութիւր Հովսեպպետը հոգով շատ ուրախ կլինէր, եթէ կարողանար հասարակ ժողովրդին հասկանալի լեզուաւ, այժմեան աշխարհիկ բարբառով, Ս. Գիրք հրատարակել, բայց այնպիսի գործ է այդ, որ ոչ միայն մեծամեծ գժուարութիւնների հետ կապուած է և ահագին աշխատութիւն ու ատուածապանական, լեզուագիտական հմտութիւն է պահանջում, այլ որ գլխաւորն է՝ գլուխ չի գայ երբէք արտաքին, արհեստական միջոցներով. Մեծ սխալ է կարծել, թէ մենք ս. Գրքի բառերը մի բարբառից միւսի վերածելով՝ ամէն գեպքում կրկին ս. Գիրք կստանանք. որպէս զի նոր փոխադրութիւնը Աստուածաշունչի հեղինակութիւն ունենայ և իրեև Աստուծոյ խօսք աղդէ մարդոց սրտերի վերայ՝ պէտք է ինքը փոխադրողը Աստուծոյ խօսքի բոլոր զօրութիւնն զգացած լինի, նորանից արտայայտուած կրակի և լուսոյ մէջ հոգով ճաճանչուած և մաքրուած լինի. Իսկ դա կիրականանայ այն ժամանակ միայն, երբ եկեղեցւոյ մէջ կենդանի ներգործութիւն ունի Աստուծոյ խօսքը թելադրող ս. Հոգին և նորա զաւակներից չատերին լեցրել է օգևորութեամբ՝ ընդունակ գործելու Իւր թելադրութիւնների թարգմանը լինելու։ Երբ կլինի, երբ կստանայ արդեօք մեր եկեղեցին այդ հոգևոր վերակենդանութիւնը,—մի օր, յոյս ունինք՝ թեև ոչ շատ հեռու ապագայում. բայց առ այժմ սոսկացած ենք բաւականանալ մեր հայերի թողած ժառանգութեամբ՝ այն հայերի, որոնց մէջ Հոգին կենդանի էր, երբ ս. Գիրքը թարգմանեցին։ Եւ նոցա ոգևորուն թարգմանութիւնը դեռ երկար ժամանակ կարող է մեզ ոգի ներշնչել և առաջնորդել ճշմարտութեան ճանա-

պարհով, մենք պարտաւոր ենք սովորել այն լեզուն, որով մեր նախնեաց փառաւոր անցեալն է մեզ հետ խօսում և նոցա հետևել դրդում. Սիրենք այդ լեզուն, սիրենք և ցանկանանք միշտ աչքի առաջ ունենալ այն Աստուածաշունչը, որ մեր Աստուծոյ պատգամներն է մեզ ուսուցանում մեր հայրերի լեզուով։

ՀԱՐԱՆՑ ՁԱՑՆԵՐ։

Լօնդ. պատուական ուսուցչապետն առաջարկում է այս վերնագրի ներքոյ լոյս ընծայել պարբերաբար Christliche Welt-*ի մէջ զեղեցիկ հատուածներ եւ առացուածներ հին ժառացած հեղինակների երկասիրութիւններից, և նկատի ունենալով, որ «շատ հին կայ աւելի գնահատելի, քան մեր այսօր, յաչող դէպքերում արտադրած արծաթեղէն ու պղինձը», նա իրեւ առաջին օրինակ մէջ է բերում հնդը մեր դարու սկիզբներին (1815 թ-ին) վախճանած, իր մաքուր բարեպաշտութեամբ յայտնի, մի գերմանացի մատենագրի՝ Մաթիաս Կլաուդիուսի, հետևեալ տողերը։*

Ա. ԻՄ ՄԻ ԲԱՐԵԿԱՄԻՆ ՈՒՂՂԱԾ ԳԱՄԱՅԱԳԻՐ։

Մարդս կարող է ճշմարտութիւնը չճանաչել, արհամարհել կամ ճնշել. սակայն որչափ և ծուռ լինի ու սխալ նորա ընթացքը՝ մոլորուած է նա միայն, և իւր այսպիսի ընթացքի մէջ կրկին ճշմարտութիւն է որոնում և ճշմարիտ լինել կարծում. Առանց ճշմարտութեան կատարուել նա չէ կարող և անկարելի է որ տեսնէ այն, ու աչքը գլուխ չխոնարհեցնէ։

Սխալուիլը մարդկային է, իսկ ճշմարտութիւնն անմեղ է. Պատրաստ է նա միշտ և միշտ ձանձկալին է, և պէտք է նաև անշուշտ նորանը լինի վերջը իրաւունքը։

Մանկիդ ճերմակում են, գրում ես դու, մեր Տէրը Քրիստոսին չճանաչուած ու արհամարհուած տեսնելով. Թող լինի, դու բարի և արդար հոգի. պատիւ են այն ճերմակ մազերը, որ նորա համար են ճերմակել։

Թէպէտ նորա համար հարկաւոր չէ, որ քո մազերը ճերմակին, նա կմնայ անշուշտ, ինչ որ է, Ամբոխ ճշմարտութիւնը չեն ճանաչում և դարձ դնում յիրաւի վնաս են կրում դորանից, բայց ինչ կարող է ճշմարտութեանը վնասել՝ արդեօք ճանաչուում և գործ է դրուում նա, թէ ոչ. Նա ոչ մեկի կարիք չունի, և նորա բնութեան մեծութիւնից ու վեհութիւնից է, որ պատրաստ կեցած է միշտ, ապերախտութեան դէմ չի յոգնում և ծայրագոյն արհգահի նման կանգնում է ամպերի ու մառախուղի հետ՝ մարելու և ամիլզելու համար նոցա։

Թող կռուէ և սիրտդ մի խորտակիր այն բանի համար, որ փոխել չես կարող։

Ով չի կամենում Քրիստոսին հաւատալ, պէտք է տեսնէ, թէ ինչպէս գլուխ կհանէ առանց նորան։ Ես և դու չենք կարող. Մենք կարիք ունինք այնպիսի մեկի, որ մեզ բարձրացնէ և պահէ՝ մինչ կենդանի ենք, և ձեռքը մեր գլխի տակ դնէ, երբ կմեռնինք. և Նա կարող է ամենապատուական կերպով. իսկ մեկ ուրիշը չգիտենք, որի կողմից աւելի յոժարութեամբ ընդունէինք այդ օգնութիւնը։

Բ. ԻՄ ՈՐԴԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԻՆ ԱՐԱՒ ԿՏԱՒԻՑ։

Կամաց կամաց մնանում է ժամանակը, երբ ես պէտք է այն ճանապարհը գնամ, որից այլևս չեն վերադառնում. Քեզ հետս վերցնել չեմ կարող և թողնում եմ այնպիսի մի աշխարհում, ուր բարի խորհուրդն աւելորդ է։

Ոչ որ իմաստուն չէ մեր արդանդից սկսած. ժամանակն ու փորձառութիւնը ուսուցանում են մեզ և մոքրում են կալը։

Ես աւելի երկար միջոց եմ տեսել աշխարհը, քան դու. Ամէն ինչ ոսկի չէ, սիրելի՛ որդեակ, որ փայլում է. ես քիչ աստղեր չեմ տեսել երկնքից վայր ընկած, և քիչ գաւազաններ՝ որոնց վերայ յենուում էին, կոտրած.—Դորա համար կամենում եմ մի քանի խորհուրդ քեզ տալ և քեզ ասել, թէ ինչ եմ նկատել, և ինչ է սովորեցրել ինձ ժամանակը։

Ոչինչ չկայ մեծ, որ բարի չէ, և ոչինչ ճշմարիտ՝ որ չի գեղեցնում։

Մարդս այսօրէն իւր տանը չէ... Ամէն ինչ անցնում է նորա հետ և նորա կողքին. Նա թողած է ինքն իւր յուսով, և իւր ձեռին է իւր կեանքը։

Իսկ նորա համար միևնոյնը չէ՝ ալ է գնում արդեօք, թէ ձախ։

Մի՛ խաբուիր, իրր թէ նա ինքն իւր գլխի ճարը տեսնել և իւր ճանապարհը գտնել կարող է...

Ափսոս համարիր քեզ չար գործելու համար, Սիրտդ թող անցաւոր բանի չկպչի,

Ճշմարտութիւնը չի յարմարուում մեզ, սիրելի՛ որդեակ, մենք պէտք է նորան յարմարուինք,